ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 203-Ա

ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՎՀԱՏ ՔՈԼԱՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39–րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 29-ին կայացած նիստի թիվ 835 արձանագրությունը և Լուսիկ Սարգսյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Լուսիկ Սարգսյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Աշխատանքը սկսել 2026 թվականի օգոստոսի 6-ից:

2. Լուծել Արևհատ Քոլայանի հետ 2026 թվականի ապրիլի 28-ին կնքած № Մ-16-2026 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2026 թվականի օգոստոսի 5-ը:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 5

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026թ օգոստոսի ի
N -Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Գվիտոն Դավթյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ

Անդամներ՝

Հուսիկ Հարությունյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Մայիս Նազարյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող